ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Եղեգնաձոր,Շահումյան 5 Հեռ. (374010) 287701,(3740281) 2 25 22
“ ____” _____ 2019 թ.. N _____ Ֆաքս (374010) 28-18-32

,,ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ,, ՀԿ-Ի
,,ՀԵՏՔ,, ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՊԱՐՈՆ Գ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Ձեր 24.05.2019թ. հարցման

Հարգելի պարոն Բալասանյան

Ներկայացնում ենք Ձեր կողմից պահանջված տեղեկատվությունն ըստ կետերի

1/ 2019թ. առաջին եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցները 2018թ երկրորդ կիսամյակի կատարողականի արդյունքների հիման վրա ստացել են 12114.4 հազ. դրամ պարգևատրում: Այլ տիպի պարգևավճարներ չի տրվել:

2/ Մարզպետարանը հունիսի 1-ի դրությամբ ունի 93 աշխատակից, որից 71-ը քաղ. ծառայող: Պարգևատրում ստացել են 2018թ. երկրորդ կիսամյակում առնվազը վեց ամիս աշխատած բոլոր 66 քաղ. ծառայողները:

3/ Քաղ. ծառայողների պարգևատրումը տրվել է մարզպետի կարգադրության և գլխավոր քարտուղարի հրամանի համաձայն՝ կատարողականի կիսամյակային գնահատականին համապատասխան պարգևատրման գործակցով:

4/ Այլ պարգևավճարներ չի տրվել, որի հետևանքով մնացած աշխատակիցները՝ տեխնիկական սպասարկում իրականացնող,մարզպետի աշխատակազմ,պարգևատրումներ չեն ստացել:

5/Նշված ժամանակահատվածում Ձեր հարցման մեջ նշված անձիք պարգևատրում չեն ստացել, իսկ քաղ. ծառայող հանդիսացող գլխավոր քարտուղարն ու վարչության պետերն ստացել են միայն քաղ. ծառայության պարգևատրում:

03.06.2019

X

ԿԱՄՈ ՍԱՀԱԿՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SAHAKYAN KAMO 2108590021 Կ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ֆին.և սոց.տնտ.վարչություն
Հեռ. /0281/ 2-55-08